

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

10 օգոստոսի 2011 թվականի N 60-Ա


ՀԱՄԼԵՏ ԱՎԱԼՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի <գ> կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 162-րդ հոդվածներով՝ մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Համլետ Ավալյանին ս/թ օգոստոսի 16-ից սեպտեմբերի 16-ը ներառյալ տրամադրել ամենամյա հերթական արձակուրդ՝ 20 աշխատանքային օր և լրացուցիչ արձակուրդ՝ 4 աշխատանքային օր:

Նշված ժամանակահատվածում, պաշտոնի անձնագրին համապատասխան, քարտուղարության պետի պարտականությունները դնել քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ Ալվարդ Սուքոյանի վրա:

<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճարել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ



2011թ. օգոստոսի 10
ք. Իջևան